ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մի խումբ անդամներ և Հայաստանից ընտրված ժողովրդական դեպուտատներ՝ Երևանի պետհամալսարանի ռեկտոր Ս. Համբարձումյանը, Երևանի պետհամալսարանի ամբիոնի վարիչ Լ. Հարությունյանը, գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի գլխավոր դիրեկտոր Հ. Իգիթյանը, «Գարուն» կարի արտադրական միավորման գլխավոր դիրեկտոր Գ. Ենոքյանը, Սպիտակի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ն. Մուրադյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ս. Սարգսյանը մամուլի ասուլիս կազմակերպեցին խորհրդային և օտարերկրացի ժուռնալիստների համար: Մամուլի ասուլիսը նվիրված էր խորհրդային հանրապետություններից մեկի՝ Հայկական ԽՍՀ-ի շրջափակմանը, ինչը աննախադեպ երևույթ է խորհրդային պետության պատմության մեջ:

Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Է. Հայկազյանը, բացելով մամուլի ասուլիսը, հրապարակեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակման հետևանքների մասին տեղեկանքը: Նրանում մասնավորապես ասված է. 1989 թվականի հուլիսի 21-ից սկսած Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ձեռնարկվել է երկրի պատմության մեջ աննախադեպ ակտ՝ Հայաստանի տնտեսական շրջափակումը: Իր էությամբ այդ հակահիրավական ձեռնարկումը լրիվ կազմալուծել է հանրապետության կենսագործունեությունը, կործանարար ազդեցություն գործել Հայկական ԽՍՀ ժողովրդատնտեսական համալիրի գործառության վրա: Խախտվել է աշխատանքի նորմալ ռեժիմն ամբողջ երկրում:

Այդ տմարդի, անբարո ձեռնարկումն առանձնապես անդրադառնում է երկրաշարժի գոտում բնակվող տուժած մարդկանց վրա, որտեղ վերջին երկու ամսում փաստորեն դադարեցվել են շինարարական և վերականգնման աշխատանքները: Միայն սեպտեմբերի ընկզբից ադրբեջանական երկաթուղով մեր հանրապետությունը չի ստացել ավելի քան 30 հազար վագոն կամ 1,6 միլիոն տոննա ժողովրդատնտեսական բեռներ, որոնց 60 տոկոսը նախատեսված էր աղետյալ գոտու համար:

Վառելիքի մատակարարումների ձախողման պատճառով հանրապետությունում լրիվ կազմալուծված է ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքը: Ավտոմոբիլային ու երկաթուղային տրանսպորտի հարկադրական զանգվածային պարապուրդի պատճառով Հայաստանն իր հերթին չկարողացավ ընդհանուր միութենական ֆոնդերի համար մատակարարել ավելի քան տասը հազար տոննա պտուղ, բանջարեղեն, խաղող:

Արտակարգ ծանր վիճակ է ստեղծվել արդյունաբերության մեջ: Նյութական ռեսուրսների թերամատակարարման հետևանքով արդյունաբերական ձեռնարկություններից շատերը լրիվ կամ մասնակիորեն դադարեցրել են աշխատանքը: Պակաս է առաքվել մոտ 200 միլիոն ռուբլու արդյունաբերական արտադրանք: Զախողվում է պայմանագրային պարտավորությունների կատարումը: Երկրի տասնյակ հազարավոր ձեռնարկություններ չեն ստանում անհրաժեշտ կոմպլեկտավորող առարկաներ, նրանցից շատերը պարապուրդ են տալիս: Շրջափակման հետևանքով երկրին հասցված ուղղակի տնտեսական վնասը միլիարդավոր ռուբլիների է հասնում: Բայց էլ ավելի մեծ է բարոյաքաղաքական վնասը:

Ապա ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Ս. Սարգսյանը ժուռնալիստներին և մեծաթիվ հյուրերին ծանոթացրեց «Ռեգիոնի իրադրության սրման և Հայկական ԽՍՀ-ի ու ԼՂԻՄ-ի շրջափակումը վերացնելու անհետաձգելի միջոցառումների մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմանը:

Հայաստանից ընտրված ժողովրդական դեպուտատները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի բացման օրը հանդես եկան հայտարարությամբ, որով իրենց բողոքը հայտնեցին Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից Հայաստանի ու ԼՂԻՄ-ի շրջափակման դեմ և պահանջեցին վճռաբար դատապարտել այդ բարբարոսական ակտը: Ժուռնալիստներին այդ հայտարարության տեքստին ծանոթացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատ Լ. Հարու-

● ՎԵՐՋԸ՝ 4-ՐԴ ԷՋՈՒՄ

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

● ՍԿԻԶԲԸ՝ 1-ԻՆ ԷՋՈՒՄ

թյունյանը: Հայտարարության մեջ մասնավորապես ասված է. Արդեն երկրորդ ամիսն է, ինչ Հայկական ԽՍՀ-ն և երկրորդ տարին է, ինչ ԼՂԻՄ-ը կանխամտածված կերպով շրջափակված են Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից: Իր դաժանությամբ այդ աննախադեպ ու տմարդի ձեռնարկումը հանգեցրել է Հայաստանի կենսապահովման բոլոր ոլորտների կազմալուծմանը, աղետալի գոտում վերականգնման աշխատանքների լիակատար դադարեցմանը: Շրջափակումը որպես ամբոխի կամ ոչ պաշտոնական կազմակերպությունների տարերային գործողությունների հետևանք ներկայացնելու փորձերը պետք է հերքվեն որպես անհիմն փորձեր: Մենք համոզված ենք, որ շրջափակումը պլանավորված այն քաղաքական ձեռնարկումների շղթայի մի օղակ է, որոնց նպատակն է ուժի ճնշման միջոցով թույլ չտալ ԼՂԻՄ-ի պրոբլեմի քաղաքական լուծում:

Միջազգային նորմաներին համապատասխան, շրջափակումը պատերազմական գործողությունների վարման հատուկ ձև է: Իմպերիալիստական տերությունների ագրեսիվ քաղաքականության այդ զենքը հիմա գործադրում է խորհրդային սոցիալիստական հանրապետություններից մեկը ի դեմս մյուսի:

Երկիրն ըստ էության տեղյակ չէ, թե ինչ չափերի ու խորության է հասել շրջափակման ներգործությունը ոչ միայն տարերային աղետից ավերված Հայաստանի վրա, այլև ամբողջ ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ու նրա միջազգային հեղինակության վրա: Մասսայական ինֆորմացիայի միջոցներն ամեն ինչ անում են խորհրդային և համաշխարհային հասարակայնությունից թաքցնելու այդ խայտառակ ակտը: Բայց չի կարելի կրկնել անցյալի սխալները: Ժողովրդից թաքցնելով Սումգայիթի մասին ճշմարտությունը և քաղաքական գնահատական չտալով այդ հրեշավոր դեպքերին, մենք ընպաստեցինք Ֆերգանայում և Նոր Ուզենում տեղի ունեցած ոճրագործություններին:

Չտալով շրջափակման քաղաքական գնահատականը, հակահարված չհասցնելով հայ ժողովրդին տնտեսապես խեղդամահ անելու ոգեշնչողներին, մենք երկիրը տեռորիզմի սանձարձակության, շրջափակման և բռնության տիրաժավորման՝ որպես ազգամիջյան կոնֆլիկտների լուծման միջոցի, վերտանգ ենք ստեղծում երկրում:

Հայ ժողովուրդը սպասում է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը վճռաբար կդատապարտի Ադրբեջանի կողմից Հայկական ԽՍՀ-ի շրջափակման ակտը: Անհրաժեշտ է որոշել թույլ տրված շրջափակման համար Ադրբեջանի կառավարության պատասխանատվության չափը, Հայաստանին հատուցել շրջափակման պատճառած բոլոր կորուստները, խստագույնս պատժել դրա ոգեշնչողներին, կազմակերպիչներին ու կատարողներին: Հարկավոր է արագացնել այն մեխանիզմի գործադրումը, որն այսուհետև թույլ չտա նման ձեռնարկումներ:

Շրջափակման փաստը լուծության մատնելը, դրա քաղաքական գնահատումից խուսափելը հավասարազոր են ագրեսիայի խրախուսմանը: Այդ ուղին կործանարար է երկրի համար:

Բնութագրելով Հայաստանը ամբողջ երկրի, ուրիշ պետությունների հետ կապող հիմնական տրանսպորտային ուղիների շրջափակումը, պետություններ, որոնք օգնության ու քաղաքացիական գթության ձեռք են մեկնել հայ ժողովրդին, Սպիտակի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ն. Մուրադյանը շրջափակումը որակեց որպես մի այնպիսի քաղաքական ակտ, որը կոչված է վերին աստիճանի աղետալի վիճակի մեջ դնել հանրապետության բնակիչներին: Շրջափակման կազմակերպիչների ու ոգեշնչողների մեղքով այսօր շրջանի քաղաքների ու գյուղերի վերսկսանգնման աշխատանքներով զբաղված յուրաքանչյուր շինարարի ընկնում է... վեց կիլոգրամ ցեմենտ: Եվ դա այն պայմաններում, երբ ավերված քաղաքներն ու գյուղերը ոտքի կանգնեցնելու համար պահանջվում է միջոցների ու նյութական ռեսուրսների առավելագույն մոբիլիզացում:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Լ. Հարությունյանը հիրավի ոսկե ամրան անվանեց այն մետաղակոնստրուկցիաները, որ մեր հանրապետությունը ստանում է օդային տրանսպորտով:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները, պատասխանելով ժուռնալիստների առաջադրած հարցերին, նշեցին, որ միութենական մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն հասարակայնությանը ճիշտ չեն տեղեկացնում տնտեսական շրջափակման հետևանքով Հայաստանում ստեղծված դրության մասին: Այսպես, վերջերս կենտրոնական թերթերում հաղորդում երևաց այն մասին, թե երկաթուղային տրանսպորտի երթևեկությունը դեպի Հայաստան վերականգնվել է:

Նման պնդումները այն պատրանքն են ստեղծում, ասաց Ս. Համբարձումյանը, թե իբր կենտրոնական իշխանությունների ջանքերը հաջողությամբ են պսակվել՝ հանրապետությունը ապաշրջափակվել է, հետևաբար նաև պետք է օրակարգից հանել այդ անագորույն ձեռնարկման հարցերը, դա հասարակայնության ապակողմնորոշում է, իսկ ըստ էության սուտ: Լավագույն դեպքում Հայաստանը օրվա ընթացքում ստանում է վագոնների մոտ տասը տոկոսը: Իսկ ինչ բեռ կա դրանցում. փչացած մթերքներ, գործածության համար ոչ պիտանի ցեմենտ, նույնիսկ դատարկ վագոններ ու ցիստեռններ: Շատ վագոններ պարզապես կողոպտված են:

Այն բեռները, որ անվնաս են հասցվում նշանակման վայրը, ավտոմոբիլային վառելիքի բացակայության պատճառով չեն կարող առաքվել և որպես մեռյալ բեռ ընկած են երկաթուղային կայարաններում, փակուղիներում:

Մենք հիմքեր ունենք կարծելու, որ ադրբեջանական կողմը իր հավակնությունների արտահայտման համար օգտագործում է իշխանության կենտրոնական մարմինների անվճռականությունից, նույնիսկ անգործունեությունից, այս կարծիքը հայտնեց դեպուտատ Հ. Իգիթյանը:

Շրջափակման այս օրերին հայ ժողովրդի սոցիալական անպաշտպանվածության մասին խոսեց Լ. Հարությունյանը, պատասխանելով ժուռնալիստների հարցերին:

Ի պատասխան Հայաստանի տնտեսական շրջափակման ընկատմամբ հանրապետության կուսակցական ղեկավարության բռնած դիրքի մասին հարցին, հաղորդվեց, որ այդ դիրքորոշումը արտահայտվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտաշրջանում, ապա նաև ԽՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումում ունեցած նրա ելույթներում:

Վերջում մամուլի ասուլիսի մասնակիցների համար ցուցադրվեց Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական շրջափակման մասին տեսաժապավեն:

Ջ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆ
Լ. ԱԶՐՈՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթակիցներ)

ՖԵՈԴՈՐ ՏՅՈՒՏՉԵՎ

Ռուս մեծ բանաստեղծի ստորև տպագրվող գործը, որ գրված է 1867 թվականին, թուրքական բռնապետության դեմ Կրետե կղզու հույն հայրենասերների ապրստամբության առիթով, առաջին անգամ լույս է տեսել 1897 թ., «Եղբայրական օգնություն հայերին» ժողովածուի մեջ: Ինչպես հայտնի է, ժողովածուն նվիրված էր 1895—96 թթ. Թուրքիայում կազմակերպված հայկական ցեղասպանությանը: Այնուհետև այդ բանաստեղծությունը չի վերահրատարակվել: Եվ ահա, 1988